

ՄԱՐԳԱՐԻՏ ԽԱԶԻԿՅԱՆ

ԽՈՒՌԻ-ՈՒՐԱՐՏԱ-ՀԱՅԿԱԿԱՆՔ

Ինչպես հայտնի է, հայերենում միջին պարսկական, հունական, արամեական և ասորական փոխառությունների ստվար շերտից բացի, առանձնանում է մի այլ շերտ, որ հայտնի է «կովկասյան» ընդհանուր անունով: Այդ «կովկասյան» հորջորջված փոխառությունների թվին են պատկանում՝ այլ կովկասյանների կողքին, նաև խուտի-ուրարտական փոխառությունները¹: Խուտի-ուրարտերենը, ինչպես ցույց են տվել Դյակոնովը և Ստարոստինը², պատկանում է կովկասյան լեզվաընտանիքի հյուսիս-արևելյան (ըստ Դյակոնովի՝ ավարոդյան³) ճյուղին:

Խուտի-ուրարտական ազդեցությանը հայերենում, բացի մի շարք սոցիալական (*աղախին*, *ծառա*), մշակութային և տեխնիկական (*կնիք*, հավանաբար, *ագոտ*⁴), բուսական (*խնձոր*, *սալոր*, *խաղող*, *անանուխ*⁵), կենդանական (*ուղտ*) ոլորտի և որոշ այլ փոխառություններից (*ծով*), վերագրվում է հնդեվրոպական լեզուներին հատուկ սեռի քերականական կարգի բացակայությունը, ինչպես նաև ձայնավոր վերջնահնչյունի կորուստը՝ հնդեվրոպական փոփոխական շեշտը խուտի-ուրարտական նախավերջին վանկի կայուն արտաշնչական շեշտով փոխարինելու հետևանքով⁶:

Ստորև կներկայացվեն հայերենում խուտի-ուրարտական ազդեցության նոր օրինակներ:

I. Հայերենին բնորոշ լ: դ և ր: ո հնչույթների հակադրությունը հատուկ չէ հնդեվրոպական լեզուներին, սակայն որոշ փաստեր թույլ են տալիս ենթադրել, որ խուտի-ուրարտերենը տարբերակել է երկու կողքային (լատերալ), ինչպես նաև երկու թրթռուն հնչյուններ:

Անշուշտ, հին լեզուների հնչյունային համակարգի լիակատար վերականգնումը անհնարին է, հատկապես եթե այդ լեզուներ

ըը գրանցվել է փոխառյալ բոլորովին այլ հնչյունային համակարգ ունեցող լեզվի համար ստեղծված գրով: Եվ հենց նման օրինակ է ներկայացնում խուռի-ուրարտերենը, որի գրանցման համար հարմարեցվել էր շումերա-աքքադական սեպագիրը:

Խուռի-ուրարտական հնչյունային համակարգի ուսումնասիրման գործում լրացուցիչ բարդություն է ստեղծում նաև այն հանգամանքը, որ ծագումնաբանական տեսակետից այն փաստորեն մեկուսացած լեզու է: Թեև, ինչպես վերը նշվեց, խուռի-ուրարտերենի ծագումնաբանությունը կարելի է պարզված համարել. այն, հավանաբար, պատկանում է ալարոդյան լեզվաընտանիքի նույն ճյուղին, ինչ և ավարա-անդա-ցեզյան, դարգի-լեզգիական և վայնախյան լեզվախմբերը⁷, սակայն շատ ավելի վաղ է անջատվել նախալեզվից և հեռացել 'ալարոդյան' միջավայրից, քան վերը նշված լեզուները: Այդ իսկ պատճառով խուռի-ուրարտերենի հնչյունային համակարգը զգալի փոփոխություններ է կրել և անհամեմատ ավելի աղքատ է նախալեզվի համեմատությամբ: Այսպես, օրինակ, այն կորցրել է 'ալարոդյան' կոկորգային, կողքային բաղաձայնները և ետքմայինների մեծ մասը:

Ի և ր հնչյունները պարունակող խուռի-ուրարտական բառերի համեմատությունը վերականգնված նախաալարոդյանների հետ ցույց է տալիս, որ Լ-ն համապատասխանել է նախալեզվի կամ Լ ձայնորդին, կամ կողքային շփականներին և պայթաշփականներին, իսկ ր-ն՝ ր ձայնորդին կամ կողքային պայթաշփական բաղաձայնի:

Ուրարտերենի ուղղագրությունը հնարավորություն չի տալիս պատասխանել այն հարցին, թե արդյոք, ուրարտերենում Լ և ր հնչյուններ պարունակող գրանշանները արտահայտել են մեկ թե՞ երկու տարբեր հնչույթներ: Այդ իսկ պատճառով խուռի-ուրարտական փոխառությունների մեջ հայերենում, ինչպես նաև ուրարտական տեքստերում հանդիպող տեղանունների հայկական ձևերում *ռ.ր* և *շ.շ* օգտագործման որևէ օրինաչափություն չի բացահայտվում:

Այլ է վիճակը խուռիերենում: Այստեղ վկայված ուղղագրական համակարգերից մեկը տարբերակում է Լ:Լ և ր:ր գույգերը: Ընդ որում Լ-ի համապատասխանությունը հայերեն *ղ*-ին *աղախի*ն բառում (Գս.-ու. *all- 'տիրել արմատից) և խուռիերենի ր-ի համապատասխանությունը հայերեն *ռ*-ին (*ծառայ* բառում <

խոռ. *sarrae* 'ռազմագերի'⁸), թույլ է տալիս ենթադրել, որ կրկնակի 1-ով արտահայտված ինտենսիվ լատերալ պայթաշփականներից ծագող հնչյունը արտասանությամբ մոտ էր հայերեն *դ*-ին, մինչդեռ կրկնակի *բ*-ով արտահայտվածը՝ հայերեն *մ*-ին:

Ի դեպ, սա միակ դեպքը չէ, երբ հայերենի տվյալները նպաստում են ուրարտական հնչյունային համակարգը պարզելուն:

Ինչպես վերը նշվեց, խոռի-ուրարտերենը կորցրել է բազմաթիվ ալարողյան հնչյուններ, բայց պահպանել է ատամնային շփական և պայթաշփական բաղաձայնները: Սակայն պարզ չէ, թե արդյոք խոռի-ուրարտերենին հայտնի էին շչական հնչյուններ, քանի որ սեպագրում սուլական (սիբիլանտ) և շչական հնչյունները արտահայտվել են միևնույն նշաններով:

Zabahaē ~ *Ջավախք* համապատասխանությունը տվյալ դեպքում որոշիչ դեր կատարել չի կարող, քանի որ *Ջավախքը* ուրարտական տարածք չէր և, հետևաբար, այդ տեղանունը նույնպես ուրարտական չէր: Սակայն այս դեպքում մեզ օգնության են գալիս երկու վաղ արիական փոխառությունները հայերենում՝ *պայծառ* <*pati-*čar(a)*na և *ծիրանի* <*čiranya⁹: Ինչպես տեսնում ենք, չնայած այն հանգամանքին, որ հայերենին հայտնի են շչական հնչյուններ, արիերենի շչական *ծ*-ին հայերենում համապատասխանում է սուլական *ծ* (c) հնչյունը: Այս փաստից հետևում է, որ այն միջնորդ լեզուն, որի միջոցով այդ բառերը անցել են հայերենին, շչական բաղաձայններ չի ունեցել: Իսկ քանի որ ամենահավանական միջնորդ լեզուն տվյալ պարագայում խոռի-ուրարտերենն է, եզրակացնում ենք, որ առնվազն այն բարբառում, որից այդ բառերը անցել են հայերենին, շչական պայթաշփականներ չեն եղել:

II. Հայերենում հնդեվրոպական ետնաքմային *g*' հնչյունը զարգանում է *ծ*-ի: Բացառություն է կազմում I դեմքի եզակի թվի անձնական դերանունը (< հնդեվր. *eg'o*), որտեղ սպասված *ծ*-ի փոխարեն ունենք *ս* հնչյունը (*ես*):

Խոռի-ուրարտերենում եզակի թվի առաջին դեմքի անձնական դերանվանական հիմքերն են *yes-* էրգատիվ և արսուլուտիվ և **so-* թեք հոլովներում:

Հայկական և ուրարտական ձևերի աչքի ընկնող այս նմանությունը, անշուշտ, պատահականության արդյունք է, քանի որ կասկածից դուրս է հայկական դերանվան հնդեվրոպական և խուռի-ուրարտական դերանվան ալարոդյան ծագումը (հմմ. ալարոդյան *'ez-/*zo-¹⁰): Մական ուրարտական դերանվան լուսի ներքո, կարծում եմ, իր բացատրությունն է գտնում հայկական դերանվան «բաղաձայնը» սպասված ծ-ի փոխարեն: Դա ուրարտական համահունչ դերանվան ազդեցության արդյունք է:

MARGARIT KHACHIKYAN

HURRO-URARTO-ARMENIACA

It is generally accepted that besides a considerable number of Iranian, Aramaic, Syriac and Greek loan-words another ancient stratum known as "Caucasian" can be identified in Old Armenian. Among other Caucasian borrowings, to this stratum belong those from Hurro-Urartian (the latter term is used to denote all the variety of Hurrian and Urartian intermediate dialects not attested in texts).

Apart from a number of social, cultural, botanical, zoological terms and some other loan-words, the loss of genders as well as of the final vowel in Old Armenian are due to Hurro-Urartian influence.

In the paper further cases of Hurro-Urartian influence in Armenian are discussed:

1) the existence of two varieties of lateral and vibrant phonemes, unknown to Indoeuropean languages, but characteristic of Hurro-Urartian;

2) the presence of the sibilant *s*, instead of the expected affricate *c* in the first person singular personal pronoun *es* (< IE *eg'o), cf. the corresponding Hurro-Urartian pronoun *(j)es- going back to the Proto-East-Caucasian (Alarodian) form *'ez-.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խուռի-ուրարտական՝ աշխատանքային եզրը օգտագործում ենք նշանակելու տեքստերում չվկայված խուռի-ուրարտական բարբառները:
2. I.M.Diakonoff, S.A.Starostin, Hurro-Urartian as an Eastern Caucasian Language, Munchen, 1986.
3. I.M.Diakonoff, S.A.Starostin, op. cit., 97.
4. Ծագումով արքադական այս բառերը անցել են հայերենի խուռի-ուրարտական միջնորդությամբ, տե՛ս I.M. Diakonoff, Hurro-Urartian Borrowings in Old Armenian, *Journal of the American Oriental Society* 105.4, 1985, 598-9.
5. Н.А.Мкртчян, Субстратные названия растений в армянском языке, *Древний Восток* 4, Ереван, 1983, 24-37.

6. I.M.Diakonoff, Hurro-Urartian Borrowings in Old Armenian, 602.
7. И.М.Дьяконов, Алародии, *Вестник древней истории*, 1995 N1, 121
8. Վլադիմիր Է խոսիմ-շումբրաւիւմ րաւաւիւմ (RS 8+11, III 31),
9. H.W.Bailey, *Annali del Istituto Orientale da Napoli*, 1959, 122, 124-125.
10. I.M.Diakonoff, S.A.Starostin, op. cit., 81.